



# ԼՐԱԳԻՐ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Տարեկան դրոշմ է . . . 120 դր.  
Վեցամսեայ " . . . 65 "  
Եռամսեայ " . . . 35 "  
Մեկ ծանուցումը տարին 40 փարս է :  
Ստորագրութիւնները կանխիկ են :  
Ստորագրութիւնները ամեն ամսոյն 1 փր  
եւ 16 փր կը սկսին :

Դասը երկուսը լրագրութեան ծանուցումն  
մարտ ամեն մէկ թիւին համար 20  
փարս է :  
Լրագրութեան փոխարէնը նամակ կամ որ  
եւ իցէ գրութիւն, խմբագրին պիտի  
ուղարկուի : Եւ ամեն ծանուցումն  
ընդ իրիցին վրայ է :

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 20 ՀԱՅՏԵՍԻՍԵՐ

ՌՈՒՍԻԱ, ԱՐԵՎՄՏԵԱՆ ՏԵՐՐԻՏՈՐԻԱՆԵՐ  
ԵՒ ՏԱՀԱՄԱՍՏԱՆ

Հարեւմտ-իսթ :

Գ.

Ռուսիոյ մէջ Գաղութներուն վեճիկը :

Մեծանուն անգղիացի Գաբոն փի-  
լիսոփան իր մէկ դրուածքին մէջ կըսէ,  
թէ « իրաւագիտութիւնը օրինաց խա-  
րիսին է, ինչպէս օրէնքն ալ տէրութեան  
մը խարխալն է » : Ռուսիոյ մէջ տէրու-  
թեան խարխալը կայսրն ու զաւազանն  
է :

Ռուսիոյ ժողովուրդը 'ի սկզբանէ 'ի  
վեր անկիրթ եւ գերութեան վեճակի  
մէջ ըլլալով, զանոնք կառավարելու հա-  
մար անգութ եւ դժնայ օրէնքներ պէտք  
էին, անոնք օրէնքներ, որոնց սահմանա-  
պահիժները անորոշ ձգէն ամենուն սը-  
տին մէջ եւ մեծն ու պղտիկը զարհու-  
րեցնեն :

Եւրոպայի բարեկիրթ ազգաց եւ Օս-  
մանեան բարեկամ տէրութեան մէջ  
քանի որ քաղաքակրթութիւնն ու լու-  
սաւորութիւնը կը ծաւալն, բարեկիր  
կը չափաւորվին, պիտոյքները կը շառ-  
նան, օրէնքներն ալ ըստ այնմ կը չափա-  
ւորվին կամ նորանոր օրէնքներ ու սահ-  
մանադրութիւնները հաստատվին : Ռու-  
սիոյ մէջ ասանկ չէ. օրէնքները սակի հա-  
րիւր յիսուն կամ երկու հարիւր տարի  
տաճ ինչ էիննէ, հիմա ալ նոյն են, ու-  
րովհետեւ Ռուսիոյ ժողովուրդը ան-  
շարժ վեճակի մէջ է, յառաջադիմութիւն  
մը բռն չէ, եւ պիտի չընէ :

Ընթացողը Վ. կայսեր վերջին փա-  
րիսները եւ Նիկողայոս կայսեր առջի փա-  
րիսները ուստայ դատաստանադիրքը աչ-  
քէ անցրկցաւ : Բայց ուրիշ բան մը չե-  
ղաւ, եթէ ոչ հին հրովարտանքները կամ  
օրէնքները նոր ոճով շարադրվեցան :

Եւ օրէնքներուն թիւը քառասուն  
հազարէն աւելի է : Այսպէս ամեն մէկ  
հրովարտանքները մէկ մէկ օրէնք են, եւ  
շատ անգամ մէկմէկու հակառակ ըլլալով  
դատաւորներուն անպատ. նիւթ մըն են  
ու զոհողուն պէս քաշկուտելու : Եւ քառ-  
սուն հազար օրէնքները երկու հազարէն  
աւելի դուրսնուր բաժնրված են եւ քառ-  
սուն ու հինգ մեծ քառաձայլ հաստորներու  
մէջ ամփոփված են :

Իրաւագիտութեան ուսմանը Ռու-  
սիոյ մէջ անձանթ է : Ո՞վ կրնայ յոն-  
գրելի օրէնքը մէկնելու կամ անոր միտ-  
քը բացատրելու : Բարեկիրթ ազգաց  
մէջ օրէնքը խաղաւարտն վեր է. ամենին  
առաջ թաղաւորը օրինակ կուտայ օրէնք-

ներն յարգելու եւ անոնց հնազանդելու.  
բայց Ռուսիոյ մէջ կայսրը օրինաց անձ-  
նաւորութիւնն է. մարդացեալ կամ  
կենդանի օրէնք է : Սահմանադրութիւն,  
վիճակ, մահ եւ կեանք ամենն ալ կայսրէն  
կախեալ են. ամեն վիճակ անոր բերնէն  
պիտի ելլէ : Եւ միայն կրնայ օրէնքները  
մէկնել եւ իր բանեցընելը խառնութեա-  
նը համաձայն անոնց իմաստը բացատրել :  
Իր ցասմանը վեճիկներութեանը սրտին  
նեղութեանը կամ արդարութեանը գը-  
թութեանը եւ զուարթութեանը հա-  
մաձայն դատաստանի ատեաններուն աը-  
ված վեճիկները կը հաստատէ, կը կտրէ,  
կուղղէ կամ կը փոխէ : Թէ որ կայսր ե-  
ղող անձը բարեկիրտ եւ արդարասէր է, ն-  
դէշութիւնը այնչափ մեծ չէ. թէպէտ  
կայսրը կարող չէ դատաստանելու մէջ  
եղած անիրաւութիւնները խափանելու,  
բայց զոնէ ինքը անիրաւ եւ անգութ վե-  
ճիկներ չտար, կամ տայ նէ խաբվելով  
ու չգիտնալով կուտայ. բայց երբոր դա-  
ժան եւ անգութ կամ ապիկար մէկը ը-  
լայ, մտածելու է հետեւանքը :

Եստից մէկ հասկեցվէ, որ Ռուսի-  
ոյ մէջ արդարութիւն եւ իրաւունք ը-  
լալու համար օրէնք չկայ չէ, այլ զանոնք  
գործի ղեկը պաշտօն ունեցող անձանց  
վրայ արդարութիւն, խղճմանք, ուղ-  
ղութիւն, անշահախիւթիւն, մէկ խոս-  
քով դատաւորներու պէտք եւ պարտք  
եղած առաքելութիւնները չկան : Օ-  
րէնքը տէրութեան պաշտօնատարներուն  
եւ աղետահաններուն ձեռքը ահաւոր  
ղէնք մըն է, որ կը գործածեն ամեն անի-  
րաւութիւն ընելու, եւ ժողովրդեան  
կեանքը, ստացուածքը, պատիւը եւ ա-  
պահովութիւնը օտքի տակ տանելու :  
Ռուսները դատաստաններու անիրաւու-  
թենն աւելի կը վախճան քան թէ ամե-  
նաանգութ եւ արեւնահեղ կայսրն մը :

Պաշտաւորութիւնը Ռուսիոյ դա-  
տաւորներուն եւ պաշտօնատարներուն  
բնական յատկութիւնն է, եւ ասոր ը-  
կընդհանրապէս պաշտօններուն հաս-  
տատութիւնն ու վարձուցն աղութիւնն  
է : Եստի համար դատաստանը ստակ վա-  
տրելու բնական միջոց մըն է դատաւոր-  
ներուն համար : Պաշտաւորութիւնը  
մէջը կամ յանցանք մը չէ անոնց աչքին  
առջեւ, այլ իրաւունք մը կը համարվի,  
վանքն ամենն ալ անով կ'ապրին, Տե-  
սած դատելուն մէջ իրենց վարձքը իրենք  
կարգեն, եւ դատապարտեալ կողմը ա-  
նոնց ուղածը առանց արանջելու կը վճա-  
րէ իրրեւ արգար վարձք մը :

Ո՞վ որ հարուստ է եւ հզօր, հետե-  
ւաբար աւելի ստակ կրնայ առլ, դատը  
կը փառելի :

Նիկողայոս կայսրը այս բանը դիտար  
եւ շատ անգամ կ'աշտատութիւնը յայտ-

նրված դատաւորները խափա. րաւաժաժ  
է Սիպրի խրկելով, բայց զեշտութիւնը  
այն աստիճան արմատացած է, որ սո-  
սիժները չկրցան օգուտ մը յառաջ բե-  
րել եւ դատաւորներն ուղղել :

Հարեւաններն ու հզօրները կարող  
են ամեն տեսակ անօրէնութիւն ընելու.  
տեսչութեան օտարկանն ու դատաւորը  
կ'ապրեն իր իշխանի օտարկութեամբ.  
Եստի իշխանն աղաւթ կը մնան : Ստիկանն ու  
դատաւորը մէկ կը լլան, անոնց յանցա-  
ւորութեան ամեն տարայոյցները անյայտ  
կրնեն, դատաւարներուն իրաւունքը կը  
ոչնչացնեն, կամ ընդհատեալ դատա-  
պարտութեան վեճիկը անոնց վրայ կը  
գարձեն :

Աւերջագէտ Ռուսիոյ մէջ դատը  
վատրելի ուղղով պէտք է ստակով դա-  
տաւորները գնէ : Տեսնված չէ երբեք,  
որ ուսմ մը ինչ աստիճանի տէր կը լլայ  
թող ըլլայ՝ վերը յիշված քառասուն եւ  
հինգ հատոր օրէնքներուն մէկ յօդուա-  
ծը իրեն օգնութեան կանչէ :

Ռուսիոյ մէջ դատաւորներն ու դա-  
տաստանի գործակալները՝ ղեկնական,  
հմուտ եւ բարեհամբաւ մարդիկ չեն.  
վարքը բարքը աւելված, ամեն գործէ եւ  
պաշտօնէ վախճամ խաղախ ու անի-  
րաւ մարդիկը դատաստանական պաշտօն-  
ներու մէջ կը մանեն : Եւրոպայի բարե-  
կիրթ ազգաց մէջ դատաստանի փաստա-  
բան եղող անձինքը պէտք է բարի, կըրթ-  
եալ, օրինաց հմուտ եւ ճարտարախօս  
ըլլան : Ռուսիոյ մէջ ասոնց մէկնալ չիլն  
տրովի : Փաստաբանին զիտցածն ու գիտ-  
նալընն ամենն պարզ ու թեթեւ դա-  
տաւոր խառնակել, շիթել, դժուարեցը-  
նել, եւ փոխանակ իր պաշտպանելը կող-  
ման իրաւանցն ու շահուցը ջատագով  
կենալու, հակառակորդին փաստաբանին  
հետ կը միարանի՝ եւ ընկերութեամբ ի-  
րենց պաշտպանելը մարդոցմէն ստակ կը  
ծծեն : Դատաստանի ելլողները որչափ  
հարուստ կամ ստակ տալու կարող ան-  
ձինք ըլլան, դատը այնչափ երկար կը  
տեւէ : Դատաւորներուն ու փաստա-  
բաններուն հաճոյքէն կախեալ է զանոնք  
ու դժնուն չափ երկնցընել. ասանկով  
դատաստանները անվերջանալի են, ստա-  
կի գործութեամբ միայն կրնան վերջաւա-  
րուիլ : Եստի մէջ պարզ դատի մը տեւողութիւ-  
նը միջին հաշուով տասը կամ տասն եւ  
հինգ տարի է : Իսկ քիչ անգամ կը  
պատահի որ տասը տարիէն պակաս տե-  
ւէ, բայց քան եւ միջեւ երեսուն տարի  
տեւող դատեր շատ կը տեսնվին : Դա-  
տաստանը միայն ան ժամանակը շու-  
տով կը լլնայ, երբոր մէկը քեռի թի,  
խարաղանի, ձագիկը կամ կախելու դա-  
տապարտել պէտք կը լլայ, որովհետեւ  
այս կերպ դատերն փաստակ չկայ դա-

տաւորներուն :

Երեսուցաններն ու չինովիկները  
արտօնութիւն ունին վաճառականի կամ  
քաղաքացիի մը տուն նստելու, եւ ասոր  
տէրը կարող չէ զանոնք բռնադատելու որ  
տանը վարձքը վճարեն, եւ ոչ կրնայ զանոնք  
տունէն հանել, կամ անոնց կարասիներն  
տունէիքի տեղ վար գնել : Եւ արտօ-  
նութիւնը կը վայելն նաեւ տէրութեան  
ծառայող ու եւ է անձինք. անոր նարա-  
րելն են՝ իրենք ալ ունեցածնին ալ : Ե-  
սանկ պարագաներու մէջ միայն կայսր  
կրնայ բողբոլել : Բայց ուղղակի բող-  
բելը ներեալ չէ, նամակով արկարար  
մը խրկելու է իրեն : Այսպէս պարտք  
յատուկ քարտուղարներ կան որ այս ա-  
ղերսագիրները կը բանան, եւ որն որ ու-  
ղեն ան կը ներկայացնեն կայսր : Նոյն  
զատ անհնար է որ վայսրը իր կտաւա-  
րական անհատում զբաղմունքներուն  
մէջ ժամանակ ունենայ իրեն խրկված  
հարիւր հազարաւոր աղերսագիրները  
կարդալու քննելու :

Եւրաստանեալ մը դատվելն առաջ  
քանի մը տարի բանալ կը կենայ մինչեւ  
որ իր դատվելուն կարգը կայ : Թէ որ  
դատվելն ետքը անմեղ կամ անպարտ  
արձակվի, երեք չորս տարի բանտին մէջ  
պառկիլը շահ կը մնայ իր քովը :

Պարագի համար հինգ տարի բան-  
տարիւթիւն կայ, բայց ինչպէս վերը ը-  
սինք, տէրութեան ծառայող անձանց  
համար չէ այս բանտարկութիւնը : Պաշ-  
տօնատարանի մը դռնապանին անգամ անձը  
նուիրական ու անբռնաբարել է, ինչպէս  
եւ անոր կարասիներն ու անշարժ ստաց-  
ուածքները : Միայն, սա արտօնութիւ-  
նը ունին տունէիքի տէրերը, որ այս ան-  
բռնաբարելն պարտախաններն մէկը  
տէրութեան երկրէն դուրս ճանապար-  
հորդութիւն ընել ուղեն, անոր անցա-  
գիրը (բարսօրթ) արվելուն արգելք կ'ունեն  
ըլլալ :

Պետ. շարունակ :

### ԳԵՐԸՄԵՆ ԵՎՍԵՒ ԼՈՒՐԵՐ

Սեփաթորօքն եկած գիրքերը կը ծա-  
նուցանեն, թէ Պայտարի կողմը խրկը-  
ված գաղնակից բանակը իսկ մը տեղ յա-  
ռաջանալէն ետեւ, ղեմը փոխանակ ուս-  
տաց զօրքերու՝ պատի պէս սկստցեալ  
սպառաժուտ լեռներ գտնելով, այն կող-  
մերէն ետ քաշվելու սկսեր է : Եւրէն  
այս բանակին ձիաւորներն ու հետեւակ-  
ներուն մէկ բաժինը Սեփաթորօք դա-  
ձեր են, ու հոն ձմեռն անցունելու պատ-  
րաստութիւն կը տեսնեն : Բայց Ալե-  
պէքի կողմը խրկված բանակը մինչեւ  
գետին եղրքը հասեր է, ուր իրենց յա-  
ռաջապահները քանի մը զուեղ ուստաց

զօրքերու պատահեր են, որ զինուորական կրթութեանց կ'ընթացնէր: Ուսանողներն ասոնք տեսնելուն պէս շտապով գետին ձախ կողմը անցնէին, իրենց բանակաւորներն դաշնակիցներուն ձեռքը թողնելով, եւ հեռուէն հրացանի կռիւ մը ըսկըսէին անոնց դէմ: Դաշնակից յառապահները նոյն գիշերը հոն անցունելէն ետեւ, հետեւեալ օրը ետ դարձնէին:

Ուսանող շարունակ ուսմը կարճակէն քաղաքին վրայ, բայց դաշնակիցները բազմաթիւ նոր մարտիկներ շնորհով անոնց դէմ, սկսան իրենք ալ սաստկապէս ամրակոծել Սէփաթօրօյն հիւսիսային ամրոցները: Հոկտ. 4ին ուսաց մէկ վառարանը բռնկեցաւ զաշնակիցներուն արձակած հրացանի ռումբերէն:

Չմեռուան պատրաստութիւնները մեծ փութով կը շարունակէին: Քաղաքին ապահով կողմերը կը նորոգէին, եւ շրջակայներն ալ անթիւ խրճիթներ կը շինվին զօրաց հանգիստ բնակութեանը համար:

Հաւաստի Վրլ-Պուռուներ պատերազմներուն վրայ մայրաքաղաքս եկած մանրամասն տեղեկութիւնները, որ լրագրոյս ներկայ թուոյն մէջ հրատարակելու խոստացանք:

Դաշնակից նաւախուժքը՝ որ 70 կը տօր նաւէ կը բաղկանայ 15 հազար ցամաքային զօրքով, սեպտ. 25ին Քամիէի նաւահանգստէն ճամբայ ելած էր, Պաւլա եւ Լաքնա ծովապետներուն հրամանին տակ: Յամաքային զօրաց հրամանատարութիւնը Պաղէն զօրապետին յանձնարած էր: Ծովը ալեկոծեալ եւ հովը սաստիկ ըլլալուն պատճառաւ, նաւախուժքը պարտաւորվեր էր ուղղակի Վրլ-Պուռուն երթալուն տեղը Օտէսա երթալու, ուր սեպտ. 27ին հասաւ, եւ ծովուն ալեկոծութիւնը շարունակելուն համար հոն երկաթ նետեց:

Օտէսայի բնակիչներն այս հօր նաւատորմը տեսնելով, կարծեցին թէ դաշնակիցներն իրենց քաղաքը պիտի բռնէր: Եւ զարհուրած սկսան ամեն բաներին ժողովուրդը ու փախչել:

Նաւահանգստին խորշին մէջ ուստի մեծ շոգնաւ մը տեսնվեցաւ եւ ուրիշ չորս կամ հինգ նաւեր, որոնք հաւանականաբար Միքայելէն հոն գացած ըլլալու էին:

Դաշնակիցները տան եւ հինգ հազարի չափ սալ համրեցին, որ Օտէսայի բնակիչներուն կ'ըսէին, քաղաքէն դուրս կը կրէին, ու մէկ ժամու չափ հեռուն դաշտին մէջ կը զիզէին: Բնակիչներն ալ այն կողմը դիմելով՝ վրաններ կը կը կանգնէին մեծ շփոթութեամբ:

Դաշնակից նաւատորմը 5 օր Օտէսայի առջեւ կենալէն ետեւ, ամսոյս 2ին ծովը քիչ մը հանգարտած տեսնելով՝ ճամբայ ելաւ դէպ ի Վրլ-Պուռուն, եւ քանի մը ժամէն հոն հասաւ:

Վրլ-Պուռուն Օտէսայի զինացօրը Քերտնի ծոցին բերանը հարաւային կողմէն դուրս ցցված հրուանդան կամ լեզու) մըն է: Հիւսիսային կողմէն ալ Օլաքոֆի(Օլա) հրուանդանը կամ լեզուն ցրված է, որով Վրլ-Պուռուն եւ Օլաքոֆի դէմ դէմ գալով՝ նեղուց մը կը ձեւաւորեն: Քերտնի ծոցին բերանը՝ Մեղուցին երկու կողմը ամուր բերդեր կան: Երկու մեծ գետեր կը վազեն Քեր-

տնի ծոցը: Տները դեպք՝ որ Միքայելէն Քերտնի երկաթ մեծ ճամբէն անցնելով կուգայ Օլաքոֆի քով՝ ծովը կը վազէ: Ծոցին հիւսիսային կողմէն ալ Պուլ գետին լայնատարած բերանը կը տեսնվի: Եւ Միքայելէն առջեւէն կանցնի եւ հոն խնկալ գետին հետ խառնվելով կուգայ նոյնպէս Քերտնի ծոցը կը վազէ: Օլաքոֆի եւ Վրլ-Պուռուն բերդերը իրենց արուեստական ամրութիւնէն զատ՝ ծովը կողմէն ալ ծանծաղ (սրդ) առաջանալով պատած են, որով մեծ նաւերը չեն կրնար իրենց մօտենալ:

Դաշնակից նաւատորմը ինչպէս վերը ըսինք, ամսոյս 2ին երկաթ նետեց Վրլ-Պուռունի զինացը: Այն գիշերը 4 հազար զինաւ եւ 5 անգղիական թնդանօթակիր մակոյկ Օլաքոֆի նետուցին Տները գետին մէջ մտան: Հետեւեալ օրը առաւօտուն կանուխ դաշնակից զօրքերը ցամաք ելան բերդերէն 450 մէթրո հեռուն:

Այս օրէն ետքը թնդանօթակիր մակոյկները բերդերուն վրայ կրակ ընել սկըսան, որուն թնդանօթակիր սաստկապէս պատասխանեցին: Քիչերը վրայ գալով՝ կը ըրալը դարեցաւ: Հետեւեալ օրը ծովը ալեկոծեալ ըլլալուն, մինակ անգղիացւոյ փոքր թնդանօթակիր մակոյկները կըցան պատերազմի: Հետեւեալ օրը որ էր հոկտ. 5, առաւօտուն ժամը 3 1/2ին դաշնակիցներուն տափակ նաւերը սկսան սաստիկ կրակ մը ընել բերդերուն վրայ եւ շատ չանցաւ պարիսպներուն զանազան կողմերը մեծ ծակեր բացվեցան:

Այս օրին՝ մեծ պատերազմական նաւերը բերդերուն 1600 մէթրո մօտենալով՝ անոնք ալ իրենց կրակը բացին: Քրդաթնդանի ալ նեղուցին ներքի կողմը մը անցնելով, անոնք ալ ետեւէն կողմէն սկսան բերդերը ռմբակոծել:

Դաշնակից Պաղէն զօրապետն ու անգղիացւոյ Պաղէն զօրապետներն ալ ցամաքին կողմէն իրենց թնդանօթներն ու հրացանակիրները յառաջ քշեցին, որով բերդերը ամեն կողման, սաստկապէս զարնվելով՝ եւ մէջէն բռնկելով, պարտաւորեցան իրենց կրակը դադրեցնելու, եւ ժամը ութին միջոցները անձնատուր ըլլալու դրօշակ քշեցին: Երկու ծովապետներն անմիջապէս նաւերուն կրակը դադրեցնելով, պատգամաւորներ իրկեցին ուսաց Քաքանովի զօրապետին, որ յանձնառու եղաւ առանց պայմանի անձնատուր ըլլալու: Ուստի բերդին մէջ եղած 1400 պահապան զօրքերը դուրս ելան: Դաշնակից զօրապետները զինուորական պատուով ընդունեցին այս գերիները: Քաքանովի զօրապետը իր անունը տալով թուր դաշնակից զօրաց հրամանատարներուն յանձնել ուղեց, բայց անոնք քաղաքապետութիւն ընելով չափին, նոյնպէս միւս հրամանատարներուն ալ թուրերը իրենց վրայ թողուցին: Այս 1400 զինուորներէն զատ՝ 400ի մօտ թնդանօթ, 25 հազար ուսմը 120 հազար հրացանի փամիւռէտ, փառօք եւ եւ ուրիշ զանազան մթերք դաշնակիցներուն ձեռքն անցան:

Վրլ-Պուռունի բերդերուն ռմբակոծութեան ժամանակը Ռուսիոյ կայսեր եղբայր Ստոպանին մեծ դուքսը Օլաքոֆի էր, ուսկից ակնատես եղաւ Վրլ-Պուռունի ամրութիւնը: Ռուսաց գերիները կը պատմեն, թէ քանի մը օր առաջ իւտալի զօրապետը Վրլ-Պուռունի բերդերուն այցելութեան եկեր,

եւ ամեն բան աչքէ անցնելէն քննելէն ետեւ՝ ըսեր է թէ բերդերը չորս շաբաթ կրնան պիտանալ: Ստոպանին մեծ դուքսն ալ հոկտ. 1ին գիշերը իր բանակի օգնականներէն մէկը խրկել է Քաքանովի զօրապետին որ զիմանայ՝ բայց զօրքերը տեսնելով որ ամեն կողմէն պաշարված են եւ ապտուր չկայ, յանձն չեն առնիր անօգուտ տեղը մեռնիլ: ասկից Քաքանովի զօրապետն ալ պարտաւորվեր է անձնատուր ըլլալու:

Վրլ-Պուռունի ամրութիւնէն ետեւ՝ դաշնակից նաւատորմի մէկ մասը անմիջապէս Օլաքոֆի վրայ դաշնէ եւ սկըսան ամրակոծել: Այն օրը մինչեւ իրկուս պատերազմելէ ետեւ, հետեւեալ օրը նորէն սկսան ամրակոծութիւնը: Ռուսները տեսնելով որ պիտի չկրնան զիմանալ, Ստոպանին մեծ դուքսին հրամանաւ ամրութիւնները վառարան նետեցին ու քաղվեցան:

Հոկտ. 8/20 թուով Վրլ-Պուռունէն եկած լուրերը կը ծանուցանեն, թէ դաշնակից նաւատորմը Պուլ գետին բերանը բռնելու Քերտնի պաշարներ է:

Բէլեօն եւ Սթիւրմ ծովապետները ամսոյս 8ին առտուն Պուլ գետը մըտեր եւ 31 շոգնաւով դէպ ի Միքայել կը կրկնուին:

Պաղէն զօրապետն ալ Վրլ-Պուռունը ցամաքէն հետ կցրող պարանոցին երկայնութեամբ յառաջ կը քալէ եղեր առանց արգելք մը գտնելու իր առջեւ, եւ ուսաց գեղերը եւ ձուկի որսարանները (տալիան) կայրէ ու կը կործանէ եղեր:

Միքայել քաղաքը Քերտնի ծոցէն 20 մղոններս Պուլ գետին աջակողմէն եղերքը շինված է, եւ Սէփաթօրօյն ամրութիւն ի վեր Ռուսիոյ տէրութեան Սեփաթօրօյն մէջ ունեցած ամենէն հզօր նաւարանն է (թէքստան) է: Ռուսիոյ տէրութիւնը հազար հինգ հարիւր միլիոն ֆրանք ծախք ըրած է այս ծովային հաստատութեան համար: Մէջը տասնհինգ կառուցարան կայ, վեցը կրկնապարկ ու եռապարկ նաւեր շինելու, վեցը աւելի փոքր նաւեր շինելու: Եւրապայական ամրութիւն մթերք, եւ նաւ շինելու անհատուր նիւթ կայ մէջը տասը տարիէ ի վեր զիզված: Խաղաղութեան ժամանակ վեց հազար զորձաւոր կը բանեցնէ, եւ ստիպող պարագաներու մէջ տասներկու հազար իսկ այս միջոցին քսան եւ մէկ հազար հոգի կ'աշխատեն նաւ շինելու: Վրլ-Պուռուն եւ հինգ տարի առաջ այս քաղաքը փոքրիկ բան մըն էր, բայց հիմա 38,067 բնակիչ եւ 4998 տուն ունի:

Գերմանական Օ-Բ-Տ-Յ-Բ-Բ լրագիրը կը ըսէ, թէ Մեքսիկոյ կայսեր ճանապարհորդութեան նպատակը Միքայելէն պահպանութիւնը ապահովելն է:

Այսպէս Միքայել հասնելուն պէս, կըսէ յիշեալ լրագիրը, Օտէսային Օլաքոֆի անուն ճարտարագէտը հեռագրով հոն կանչվեցաւ, եւ քաղաքին բոլոր տիքը բազմաթիւ բերդեր շինելու հրաման արկեցաւ իրեն: Այս բերդերուն վրայ 360 թնդանօթ պիտի դրվին: Ասոնցմէ զատ՝ Ստոպանին մեծ դուքսը Քերտնի ծոցէն բազմաթիւ գործաւոր հետը բերել է, եւ մեծ փութով թնդանօթակիր մակոյկներ շինել կուտայ: Ասոնց թիւը 500 պիտի ըլլայ եւ ամեն

մէկը 2-4 հեռու գացող թնդանօթ պիտի ունենան: Թնդանօթներէ արդէն Միքայել հասած են Վիէնի զինարանէն: Ոչ միւս եւ թիւեր անունով երկու նորաշէն Ֆրգաթաները լնցելու ու կատարելապէս զինուորներ են: Այսպէս շատ հաւանելի այս նաւերուն:

Դաշնակիցներուն պատերազմական գործողութիւնները թոյլ չտուին Ստոպանին իշխանին եւ Օտէն Սաքէն զօրապետին, որ կայսեր գուժարած պատերազմական մեծ ժողովին ներկայ գտնվէին: Ստոպանին մեծ դուքսը սկսաւ 27ին Սէփաթօրօյն վրայ՝ պատերազմական ծոցով մէջ եղած որոշումները Ստոպանին իշխանին իմացնելու, եւ անոր հետ խորհրդակցելու:

Սեպտեմբ. 1-8-Տ-Յ-Բ-Բ լրագիրը կը ըսէ, թէ Ստոպանին իշխանին միտքը Սէփաթօրօյն հիւսիսային մասը պարսկէ, եւ իր բոլոր զօրութեամբ Պահլէ-Սարայի ու Վիէնի մէջ տեղը ամուր դիրք մը բռնել է Վրլ-Պուռուն պաշտպանելու համար:

Գաղղիական Քաքանովի-Բ-Բ լրագիրը կը ըսէ, թէ դաշնակիցներն այս տարի չեն կրնար Միքայելը առնել: Երբեք հետեւ ցամաքային զօրաց մեծ բանակ մը հոն տանիլ պիտի կը լըլայ: Բայց կը հաստատէ, թէ այս նաւարանը անպատճառ պիտի կործանել, որովհետեւ կըսէ, թէ որ հաշտութիւն եղած ժամանակը կործանված չըլլայ, Ռուսիոյ տէրութիւնը իր արդէն շնջված նաւատորմին պէս մեծ նաւատորմի մը կրնայ ունենալ:

## ՊԱՆԹԻԿԵՆ ԵՎԱԾ ԼՈՒՐԵՆ

Պաթիկի դաշնակից նաւախուժքները հետ գետեւ ետ դառնալ սկսեցին:

Քաքանովի գրոված լուրերը կը ծանուցանեն, թէ անցեալ տարուան մարտի 27ին մինչեւ այս տարուան օգոստոսի 8, անգղիացի 115 ուստի նաւ գերի բռնել են բայ ի այրած ու ու ընկող մարտիկներէն: Այս 115 նաւերուն 61ը Տանիմաքայի դրօշակ բացած են եղեր բռնված ատենին:

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ

Պարսէն հոկտ. 6 թուով հետեւեալ լուրերը կը գրեն մայրաքաղաքիս լրագրէն:

Ռուսաց դէմ ըրած փառաւոր յաղթութիւններուն վրայ նոր տեղեկութիւններ չեն տար ձեզի: Բայց այս յաղթութեան հետեւեալներէն մէկ քանին ձեզի ծանուցանել արժան է:

Մեր ժողոված ուստի մեռնականութեան նայելով, թէ որ ուսաց բոլոր մեռնալ ու վերադարձերը 15-18 հազար հոգի հաշուեմ են, կը կարծենք որ չափազանցութիւն մը բռնած չեմ ըլլալ: Այս արդիւնքը զարմանալի է, բայց մեր ձեռքը իրաւ ժամանակահատիկէն ճիշդ ըլլալը կը հաստատվի, եւ պատերազմներու մէջ սովորաբար եղած կորուստներուն հաւելին վրայ հիմնաւ է: Քիտանք որ ուստի գտնէ վեց հազար մեռնալ ունեցան: Վերադարձներն թիւը մեռնալներէն երկուպիտի կը լըլայ առ հասարակ: մեղք երկպառի աւելի հաշուելով, կ'ընէ 18 հազար հոգի: Ռուսի կը տեսնէ որ բուն թիւն պակաս հաշուած կը լըլաւ:

Ժողոված աւարտի խիստ շատ է: Պատերազմ երկուպիտի ձեռքերէն անցած հրացաններուն, թուրերուն եւ ուրիշ կողպատներուն բազմութիւնը: Իսկ ուսաց հանդերձները այնչափ հասարակ բան մը եղած են մեր մէջ, որ քաղաքին բնակիչներուն մէկ մասը ուստի զօրաց համագործակցութեամբ հազար են: . . .

Այս նշանաւոր պատերազմին մէջ ուսաց



